Վարչության պետը

1. Ապահովում է ՀՀ Վայոց ձորի մարզում (այսուհետ՝ Մարզ) պետական առողջապահական ծրագրերի իրագործումը.
2. Ապահովում է մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական հաստատությունների համակարգման աշխատանքը, օրենսդրությամբ սահմանված կարգով բնակչության անվճար բուժօգնության իրականացումը.
3. Ապահովում է պետական առողջապահական հաստատությունների գործունեության համապատասխանությունն օրենսդրությանը.
4. Ապահովում է Մարզի տարածքում հակահամաճարակային և կարանտինային, սանիտարահիգիենիկ միջոցառումների իրականացումը վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով.
5. Ապահովում է զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական զննման, լաբորատոր-ախտորոշիչ և հիվանդանոցային հետազոտության ու բուժման կազմակերպման աշխատանքները.
6. Ապահովում է Մարզի առողջապահական առաջնային պահպանման համակարգում հավաքագրված բնակչության մարզային ավտոմատացված ռեգիստրի (բազայի) ստեղծման և թարմացման աշխատանքները.
7. Ապահովում է Մարզի բժիշկների և միջին բուժանձնակազմի վերապատրաստման, վերամասնագիտացման գործընթացի իրականացման աշխատանքներն՝ ըստ առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի ժամանակացույցի.
8. Կազմակերպում է մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական կազմակերպությունները անաշխատունակության թերթիկներով, երեխայի առողջության անձնագրերով, բժշկական նշանակության այլ ձևաթղթերով ապահովման աշխատանքները.
9. Ապահովում է Մարզում բնակչության պետական սոցիալական պաշտպանության ծրագրերի իրագործումը.
10. Ապահովում է բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառված, պաշտպանության նախարարության համակարգի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքների գործերի հավաքագրման, ցուցակների կազմման աշխատանքները.
11. Ապահովում է սոցիալական աջակցության կարիք ունեցող փախստական բնակչության հաշվառման, սոցիալական ծրագրերի շրջանակներում

փախստականներին մարդասիրական օգնությունների բաշխման աշխատանքները.

12. Ապահովում է գործազուրկների հաշվառման և բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծմանը աջակցման աշխատանքները:
13. Ապահովում է Վարչության մասնակցությունը Մարզի տարածքային զարգացման ռազմավարության մշակման աշխատանքներին.
14. Ապահովում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության և ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացնումը Մարզում.
15. Ապահովում է Մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի և հաջորդ տարվա իրականացվելիք միջոցառումների մշակման աշխատանքները.
16. Ապահովում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների (նրանց ընտանիքների) կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական վիճակի ուսումնասիրության, երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը.
17. Ապահովում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի վարումը.
18. Ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող որդեգրել ցանկացող քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության որդեգրման ենթակա երեխաների տարածքային հաշվառման աշխատանքները.
19. Ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող խնամատար ծնողի թեկնածու դառնալ ցանկացող քաղաքացիների տարածքային հաշվառման աշխատանքները.
20. Կազմակերպում է Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակներում, Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները.
21. Կազմակերպում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Վարչությանը վերապահված գործառույթները: